Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

THE NORWEGIAN ACADEMY OF SCIENCE AND LETTERS

FRIDTJOF NANSENS KAMP FOR MENNESKERETTIGHETER OG MENNESKEVERD

AV

BJØRN EGGE

NANSEN MINNEFORELESNING

10. OKTOBER 1994

ԲՅՈՐՆ ԷԳԳԵ

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ

Երևան - 2003 թ.

Խմբագիր՝
ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Համակարգչային մուրբագրումը և
էջադրումը՝ ***ՆԵԼԼԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ***
Տեխնիկական խմբագիր՝ ***ՀԱՅԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ***
Սրբագրիչ՝ ***ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ***
Մոնտաժը՝ ***ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ***

Նախաբան

Բյորն էգգի այս հոդվածի հիմքում ընկած է Նանսենի հիշատակին նվիրված նրա դասախոսությունը, որը նա կարդացել է 1994 թ. հոկտեմբերի 10-ին Նորվեգիայի Գիտությունների և Գրականության Ակադեմիայում:

Բյորն էգգը ծնվել է 1918 թ: Նա ակտիվ մասնակցել է Նորվեգիայի հասարակական կյանքին և ռազմական, և մարդասիրական աշխատանքների ոլորտում: Ինչպես Նանսենը, նա ևս մեծ ներդրում ունի ազգերի միջև խաղաղության հաստատման գործում: Նա ազգերի հավատարիմ դատապաշտպանն է մարդու հիմնական իրավունքների պաշտպանության հարցերում:

Բյորն էգգը պայքարի նետվեց, երբ 1940 թ. ապրիլի 9-ին Գերմանիան հարձակվեց Նորվեգիայի վրա: Նա ձերբակալվեց գերմանացիների կողմից, երբ փորձում էր փախչել Բրիտանիա՝ նացիզմի դեմ պայքարը շարունակելու համար, և 1942-1945 թթ. անցկացրեց գերության մեջ ծայրահեղ դաժան պայմաններում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես առաջ նա փրկվեց Գերմանիայում Կարմիր Խաչի կողմից կազմակերպված էքսպեդիցիայի ջանքերով, որի ղեկավար կոմս Ֆոլկե Բերնադոտտը շվեդական արքայական տոհմից էր սերում:

Պատերազմից հետո Բյորն էգգը ծառայեց բանակում որպես սպա: Նրա ավագ սպայի դերում ծառայությունը Նորվեգիայում և արտասահմանում շարունակվեց երեք տարի ՆԱՏՕ-ի շտաբում, Փարիզում, 1955-ից մինչև 1958 թ-ը: 1961 թ. նա ղեկավարեց Ազգերի Միության միսիան Կոնգո որպես ռազմական հետախուզության պետ: 1965-1968 թթ. նա Մոսկվայում Նորվեգիայի դեսպանության ռազմական կցորդն էր: 1971-1972 թթ. ստանալով թոշակ Նորվեգական կառավարության Զինաթափման կոմիտեի ֆոնդից, նա միջազգային հարաբերությունների Հարվարդի կենտրոնում ուսումնասիրեց միջազգային անվտանգության քաղաքականության դրույթները: 1976-1980 թթ. նա Հռոմում ՆԱՏՕ-ի Պաշտպանության Ակադեմիայի պետի տեղակալն ու ակադեմիական աշխատանքների գծով դիրեկտորն էր:

Բյորն էգգի ռազմական գործունեությունն ընթանում էր նրա մարդասիրական ու խաղաղության պահպանմանն ուղղված ջանքերի հետ համատեղ: Նա գրավել է մի շարք պատվավոր պաշտոններ. 1981-ից 1987 թթ. եղել է Նորվեգական Կարմիր Խաչի նախագահ, 1982-1993 թթ. աշխատել է նաև ժնևի (Կարմիր Խաչի) Հենրի Դյունանտ ինստիտուտի վարչությունում: Նա Փարիզում Վետերանների համաշխարհային ֆեդերացիայի նախագահն էր, մի կազմակերպություն, որ գործում էր աշխարհի 74 երկրներում իր 27 մլն. անդամներով: Նա գրավել է նաև «Ատելության անատոմիայի» վերաբերյալ միջազգային կոնֆերանսի գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնը: Կոնֆերանսի կազմակերպման համար դրամական միջոցներ էր տրամադրել Նոբելյան կոմիտեն և Էլի Վիզելի հիմնադրամը: 1992 թ. հոկտեմբերին նա երաշխավորվել է Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության և մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի կողմից՝ հավաստիացնելու Բոսնիա-Հերցեգովինայում մուսուլմանների դեմ բռնությունները վկայությունները, հուսալով, որ այն կնպաստի ճշմարտության հաստատմանը ՄԱ-ի «Պատերազմի հանցանքների» տրիբունալում: 1992 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Բյորն էգգը նաև անդամն էր Վետերանների ֆեդերացիայի համաշխարհային միսիայի՝ հանուն նախկին Հարավսլավիայի հաշտեցման:

Բյորն էգգը հրատարակել է մի քանի գրքեր և բազմաթիվ հոդվածներ նորվեգական և միջազգային ռազմական ամսագրերում: Նա հրավիրվել է դասախոսությունների Նորվեգիայի, ԱՄՆ-ի, Շվեդիայի, Ֆրանսիայի, Կամերունի և Շվեյցարիայի համալսարաններում: Նա պաշտոնաթող է եղել 1983 թ. նորվեգական բանակի գեներալ-մայորի աստիճանում:

Բյորն էգգը ստացել է մի շարք նորվեգական և միջազգային պարգևներ: Նա միակ նորվեգական սպան էր, որ նշանակվել էր Ս. Օլավ միաբանության հրամանատար՝ միջազգային խաղաղության հաստատման գործում իր ներդրած լումայի համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գթասրտություն»

Գթասրտություն հասկացությունը նշանակում է կարեկցանք: Սա փոխառություն է հունարեն eleemosyn բառից, որ նշանակում է գթասիրության ակտ, ընծա՝ չքավորին, հիմնականում որպես կրոնական պարտականություն: Ավելի բարձր խավերի կրոնում դա սովորաբար հարուստների սեղանից մնացած փշրանքների բաժանումն էր չքավորներին, որ համարվում էր վեհ արարք՝ Աստծո ողորմածությունը հայցելու համար:

- Ֆրիտյոֆ Նանսենը մեր պատմության մի մասն է, որովհետև նա առաջինն էր մեր ժամանակներում, որ չքավորին օգնության ապահովումը կարեկցանքի աստիճանից հասցրեց գործնական քաղաքականության, իսկ սովորական անձնական բարեգործությունը՝ պետական ակտի մակարդակի: Բարեգործության կրոնական հավիտենական ուսմունքի և ժամանակակից քաղաքականության սինթեզը նա ձևակերպեց հետևյալ կերպ. «Բարեգործությունը իրական քաղաքականություն է»:

Մեծահոգի սրտից բխող կարեկցանքը խիստ դրական է, բայց բարեգործական ակտը ունի լայն քաղաքական իմաստ, նրա օգնությամբ կարելի է ստեղծել լավ, արդարադատ աշխարհ:

Ֆրիտյոֆ Նանսենի պայքարը՝ հանուն մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության, փոխեց դիվանագետների և քաղաքագետների տեսակետը իրենց սեփական գործունեության նկատմամբ և ստեղծեց նոր չափանիշներ միջազգային քաղաքականության մեջ:

Ես կփորձեմ ներկայացնել Ֆրիտյոֆ Նանսենի մարդասիրական նվաճումների ողջ նկարագիրը: Ես խոնարհաբար և մեծ ակնածանքով եմ նախաձեռնել այս աշխատանքը: Սա նաև անշահախնդիր աշխատանք է: Ֆրիտյոֆ Նանսենը ինձ համար հանդիսացել է ոգեշնչման աղբյուր ողջ կյանքիս ընթացքում՝ թե՝ պատերազմում, թե՝ խաղաղության ժամանակ:

Ես ցնցված էի մարդկային էակների նկատմամբ Ֆրիտյոֆ Նանսենի վերաբերմունքի և Կարմիր Խաչի շարժման նպատակների նմանությունից: Սա է պատճառը, որ պատմական աղբյուրների ուսումնասիրությունն

ինձ առաջնորդեց ժնև, որտեղ և Կարմիր Խաչը, և Ազգերի Լիգան ունեն իրենց արխիվները:

Նանսենի գործունեությունը՝ մի ակնարկով

Ֆրիտյոֆ Նանսենի մարդասիրական հսկայական նվաճումների ողջ պատկերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

- Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ԱՄՆ-ից Նորվեգիա սննդի պաշարների առաքման միսիան

- Ռազմագերիներին, սովյալներին ու Առաջին համաշխարհային պատերազմի փախստականներին ցուցաբերած աջակցությունը

- Ազգերի Լիգային՝ նրա գրավոր և բանավոր խոսքով աջակցությունը

Այստեղ ընդգրկված է նրա կատարած աշխատանքն այս բոլոր ասպարեզներում և տրված է նրա՝ մարդու իրավունքների ե մարդկային արժանապատվության համար մղած պայքարի կարևորության գնահատականը:

1917-1918 թթ. Միացյալ Նահանգներից սննդի պաշարների առաքումը

Նանսենի մարդասիրական սկզբնական միսիան ԱՄՆ-ում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բանակցությունների վարումն էր՝ սննդի պաշարներ Նորվեգիա առաքելու նպատակով: 1917 թ. ապրիլի 6-ին, անցնելով Դաշնակից ուժերի կողմը, ԱՄՆ-ը մտավ պատերազմի մեջ: ԱՄՆ-ը սկսեց ճնշում գործադրել չեզոք երկրների վրա՝ արգելելով նրանց սնունդ մատակարել Գերմանիային: Ամերիկայից հացահատիկի պաշարների ստացման դադարումը կհանգեցներ սովի Նորվեգիայում 6 ամիսների ընթացքում:

Այս իրադրության պայմաններում, երկիրն աղետից փրկելու համար Նանսենը մեկնեց ԱՄՆ՝ բանակցություններ վարելու պաշարների առաքման հարցի շուրջ: Տաս ամսվա ծանր բանակցություններից հետո, 1918 թ. ապրիլի 30-ին ստորագրվեց համաձայնագիր, որի համաձայն Նորվեգիան ապահովվում էր սննդի պաշարներով՝ սովից խուսափելու համար:

Ռազմագերիները

Ֆրիտյոֆ Նանսենի առաջին մեծ առաջադրանքը այս ասպարեզում ռազմագերիների հայրենադարձությունն էր: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երկու կողմերն էլ մեծ թվով ռազմագերիներ էին

վերցրել, որոնց թվում և քաղաքացիներ, և զինվորականներ կային:

1918 թ. նոյեմբերի 11-ին, երբ պատերազմն ավարտվեց, Ռուսաստանում կես միլիոն ռազմագերիներ կային: Չնայած նրանք ձևականորեն ազատ էին արձակվել, տրանսպորտի բացակայության պատճառով չէին կարող վերադառնալ տուն: Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն և այլ կազմակերպություններ ակտիվ գործունեություն էին ծավալել ռազմագերիների ճամբարներում, բայց ի վիճակի չէին նրանց ապահովել անհրաժեշտ սնունդով, դեղորայքով և տրանսպորտով: Գերիների մեջ որովայնային տիֆի համաճարակ բռնկվեց: Նրանք երկար տառապեցին, շատերը մահացան:

1920 թ. ապրիլին Ազգերի Լիգան Նանսենին խնդրեց հանձն առնել ռազմագերիների հայրենադարձման կազմակերպումը: Նա նշանակվեց Ազգերի Լիգայի գերագույն հանձնակատար՝ ռազմագերիների հարցով, և ջանասիրաբար ձեռնամուխ եղավ իր աշխատանքին: Կարմիր Խաչի երկու պատգամավոր նրան օգնական նշանակվեց, և նրանք համատեղեցին իրենց ջանքերը մի գործում, որ սկսել էին կամավորական կազմակերպությունները, բայց չէին հասցրել ավարտի՝ իրենց առաջ ծառացած դժվարությունների պատճառով:

Նանսենը մեծ օգնություն ստացավ Ազգերի Լիգայի բրիտանացի դիվանագետ Ֆիլիպ Նոել Բեյքերի կողմից, որը հետագայում դարձավ Նանսենի աջ ձեռքը՝ ողջ կյանքի ընթացքում:

Ունենալով հսկայական բարոյական հեղինակություն՝ նա գտավ ելք փակուղուց և կազմակերպեց ռազմագերիների տեղափոխումը - Բալթիկ ծովով, սահմանների վրայով մինչև Հեռավոր Արևելք, Վլադիվոստոկ: Այս գործողությունը սկսվեց 1920 թ. մայիսին և ավարտվեց 1922 թ հուլիսին: Վերջնական հաշվետվության համաձայն՝ 26 երկրների 427 000 գերիներ փրկվեցին: Նանսենին բնորոշ է, որ իր նախնական առաջադրանքը Ազգերի Լիգային իրադրության վերաբերյալ հաշվետվության ներկայացումն էր: Իր գործունյա բնավորության շնորհիվ նա անմիջապես ձեռնամուխ եղավ հարցի լուծմանը:

Դժվար է մեղադրել Նանսենին այն բանում, որ այս աշխատանքի համար բոլորը նրան են մեծարում, ավելին, նրա կենսագիրներն այնքան կարևորություն են տվել նրա մարդասիրական նվաճումներին, որ կարծես թե նա մենակ է հասել այդ ամենին:

1920 թ. նոյեմբերի 18-ին Ազգերի Լիգայի ասամբլեայում ռազմագերի-

ների հայրենադարձման վերաբերյալ ներկայացրած հաշվետվության մեջ Նանսենը հատկապես շեշտել է, որ գործողությունը հաջողություն չէր ունենա առանց Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի աջակցության: 1915 թ. մեծ հարձակումից հետո Կարմիր Խաչը օգնության հասավ գերիներին և դեռ շարունակում էր իր գործունեությունը 1920 թ. երբ սկսվեց հայրենադարձությունը: Նանսենը դրվատանքի խոսքեր ուղղեց նաև Գուստավ Ադորին, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի նախագահին՝ կոմիտեի ջանասեր աշխատանքի համար: Տեղեկատվության մեջ Նանսենը նշում է, որ իր առաջադրանքը Կարմիր Խաչի կոմիտեին Ազգերի Լիգայի անունից իր հեղինակությամբ աջակցումն ու նյութական ռեսուրսներով օգնությունն էր: Դա նրան հնարավորություն տվեց լայնացնել գործունեության շրջանակը և հեշտացնել մատակատարման իրագործումը՝ դժվարությունների առաջացման դեպքում:

Հպարտության զգացումով Նանսենը տեղեկացրեց, որ գործողության արժեքը ընդամենը մի փոքր ավելի էրքան 26 շվեյցարական ֆրանկ՝ յուրաքանչյուր անձի համար:

Ես կցանկանայի իմ կողմից մի փոքր նշում կատարել: Սխալ կլինի փորձել այս յուրօրինակ ձեռքբերումը վերագրել մեկ անձի: Անհերքելի փաստ է, որ առանց Կարմիր Խաչի կողմից ապահովված օգնող աշխատակազմի ցանցի ու ինֆրաստրուկտուրայի, մնացած կամավորական կազմակերպությունների օգնության, առաջադրանքի իրագործումն անհնարին կլիներ: Հավասարապես ակնհայտ է նաև, որ առանց Նանսենի գերազանց ղեկավարության և դժվարությունները հաղթահարելու կարողության, գործողությունն այդքան հաջող ընթացք չէր ունենա: Իրականում այն բեղմնավոր համագործակցության լավագույն օրինակ էր:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ռազմագերիների հայրենադարձությունը Ազգերի Լիգայի առաջին խոշոր մարդասիրական առաջադրանքն էր: Գործողության հաջողությունը մեծապես նպաստեց նոր համաշխարհային կազմակերպության հեղինակության բարձրացմանը և հիացմունք ու ճանաչում բերեց նրան ամբողջ աշխարհով մեկ:

Օգնություն Ռուսաստանի սովյալներին

Մինչ Նանսենը զբաղված էր Ռուսաստանից ռազմագերիների հայրենադարձության խնդիրներով, նոր դժվարություն ծագեց՝ բերքի բացակայություն 150 տարվա ընթացքում ամենաուժեղ երաշտի պատճառով: Հեղափոխության զարթոնքի, քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի պայմաններում բոլոր հասարակական կազմակերպությունները լուծարվել էին: Վոլգայի ավազանում և Ուկրաինայում մարդիկ սովամահ էին լինում: Համաճարակներ բռնկվեցին, տարածքը գտնվում էր ծայրահեղ վիճակում: Վիճակագիրները նշել են, որ 30 միլիոն մարդ էր տուժել աղետից: Մաքսիմ Գորկին 1920 թ. հուլիսին դիմեց Նանսենին և օգնություն խնդրեց: Ազգերի Լիգան օգնելու պատրաստակամություն չցուցաբերեց: Կառավարության աջակցությունը կարող էր մեկնաբանվել որպես Ռուսաստանում կոմունիստական ռեժիմի պաշտպանություն և Սովետական Միության պաշտոնական ճանաչում, մի բան, որից Ազգերի Լիգայի անդամները ամեն գնով ցանկանում էին խուսափել: Ազգերի Լիգայի պատգամավորները պնդում էին, որ դա պետության գործը չէր, որ այն պետք է լուծվեր մասնավոր բարեգործության միջոցով՝ կամավորական մարդասիրական կազմակերպությունների աջակցությամբ:

Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի նախագահ, նախկինում Շվեյցարիայի Ֆեդերալ Խորհրդի նախագահ Գուստավ Ադորը նախաձեռնեց կամավորական անկախ կազմակերպությունների կոնֆերանսի գումարումը, որին մասնակցեցին նաև մի շարք կառավարությունների ներկայացուցիչներ: Այս կոնֆերանսի ժամանակ Նանսենին խնդրեցին կազմակերպել Ռուսաստանի օգնության հարցը: Նանսենը ստանձնեց Օգնության Գերագույն հանձնակատարի պաշտոնը ոչ թե Ազգերի Լիգայի, այլ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի և կամավորական կազմակերպությունների կողմից:

Նանսենը ծայրահեղ վրդովված էր Ազգերի Լիգայի՝ մարդկային տառապանքի նկատմամբ բյուրոկրատական և ձևապաշտական վերաբերմունքից: 1921 թ. սեպտեմբերին նա Ազգերի Լիգայի ամբիոնից հանդիմանեց որոշ պատգամավորների՝ նրանց քարսրտության և վախկոտության համար: Նանսենը պնդեց, որ օգնությունը իսկապես պետության գործն է, այն չի կարելի վստահել մասնավոր բարեգործությանը:

Միամիտ լինելու և «իրական քաղաքականությունը» չհասկանալու կշտամբանքին Նանսենը խիզախորեն պատասխանեց իր հայտնի նշանաբանով. «Բարեգործությունը իրական քաղաքականություն է»:

Նա այն կարծիքին էր, որ ռեսուրսների բաժանումը պետք է լինի քաղաքական խնդիր, քաղաքականության մի մաս՝ լավ և արդարադատ աշխարհի ստեղծման գործում:

Նանսենը օգնության աշխատանքների իրագործման համաձայնագիր կնքեց Արտաքին գործերի սովետական կոմիսար Գեորգի Չիչերինի հետ: Նրա սերտ համագործակցությունը սովետական ռուսների հետ Նանսենին դարձրեց թշնամական կամպանիայի զրպարտության և հոգեբանական պատերազմի տերմինով արտահայտված դեզինֆորմացիոն գրոհի զոհը: Ֆրանսիայում, Բրիտանիայում, Ֆինլանդիայում և այլ երկրներում ռուսական արտագաղթային կենտրոնները Նանսենին մեղադրեցին բոլշևիկ և Լենինի գաղտնի գործակալ լինելու մեջ ու պահանջեցին, որ նրան հեռացնեն Գերագույն հանձնակատարի պաշտոնից:

Ժնևում, Ազգերի Լիգայի 1920 թ. արխիվներում ես գտա Նանսենի դեմ ուղղված մի դեղին թղթապանակ «Խնդրագրեր» պիտակով: Այստեղ կային Ռուսական արտագաղթային և այլ կազմակերպություններից նամակներ, որոնցում նա մեղադրվում էր իր կատարած աշխատանքում հսկայական գումարներ վաստակելու և քաղաքացիական պատերազմի ժամանակ կոմունիստական ուժերին մաքսանենգությամբ զենք մատակարարելու մեջ: Իրականում «զենքը» գյուղատնտեսության արտադրության վերակառուցման համար անհրաժեշտ տրակտորներն էին: Այնուհանդերձ, ամեն ինչ դրանով չավարտվեց: Նանսենը հարձակման է ենթարկվել ոչ միայն ռուս արտագաղթողների կողմից: Ռուս գիտնական Ալեքսանդր Շումիլովը վերջերս Մոսկվայում հայտնաբերել է հետաքրքիր փաստաթղթեր, որոնցում նշված է, որ 1921 թ. օգոստոսին Լենինը Նանսենի կոմիտեի՝ Վոլգայի ավազանի սովյալներին օգնություն ցուցաբերելու աշխատանքը մեկնաբանել է որպես հակահեղափոխական գործունեության կազմակերպում: Այնտեղ նշված է, որ Նանսենը ոչնչացրել է Լենինի սկսած գործի արդյունքները: Լենինը պահանջում էր, որ Նանսենի կոմիտեն լուծարվի, որը փաստորեն հաստատվեց օգոստոսի 27-ի Քաղբյուրոյի նիստում: Կոմիտեի ռուս անդամները ձերբակալվեցին և ուղարկվեցին Արխանգելսկ՝ Գուլագ Արշիպելագի ճամբարը:

Սա վկայում է Նանսենի բարոյական խիզախության մասին: Նա անսասան կերպով շարունակում է մարդկային կյանքեր փրկելու իր աշխատանքը անկախ այն փաստից, որ գործնականում ողջ պաշտոնական Եվրոպան նրա դեմ էր: Կարմիր Խաչի փորձառու պատգամավոր և իր անմիջական օգնական դոկտոր Ի. Ա. Ֆրիկի աջակցությամբ նա ստեղծեց ազդեցիկ և գործունյա կազմակերպություն: Համագործակցելով Ռուսաստանի կենտրոնական ղեկավար մարմինների հետ՝ նա պատասխանատու էր պարենամթերքի ու դեղորայքի գնման, տրանսպորտի կազմակերպման հարցում: Նա նաև համաձայնեցնում էր տվյալ շրջանում գործող շատ մասնավոր կամավորական կազմակերպությունների աշխատանքը:

Ֆրիտյոֆ Նանսենի նախաձեռնությունները սովի մատնված շրջաններում շատ ակնհայտ են: Այսօր ընդունված արտահայտությունը հետևյալն է. «Օգնությունից մինչև զարգացած օգնություն»:

Նանսենը նախագծեց նաև անմիջական օգնությունից հետո հետագա երկարատև օժանդակության ծրագիրը: Նրան հաջողվեց ձեռք բերել հացահատիկի սերմ, ձիեր, տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ: Իր «Ռուսաստանը և խաղաղությունը» գրքում նա տվել է այս գաղափարի մանրամասն մեկնաբանությունը:

Սովյալների օգնության կոմիտեն պաշտոնականորեն լուծարվեց 1922 թ. ամռանը: Այնուամենայնիվ, իրավիճակը մնում էր ծայրահեղ լարված: Նանսենը շարունակեց կոմիտեի գործունեությունը «Նանսենի օգնություն» անվան տակ:

Չնայած ցուցաբերված լայնածավալ օգնությանը, այս շրջաններում մի քանի միլիոն մարդ մահացավ սովից և հիվանդություններից: Օգնության կոմիտեի նախաձեռնությամբ և մասնավոր կազմակերպությունների աջակցությամբ մոտ 7 մլն. մարդկային կյանք փրկվեց սովից Վոլգայի ավազանում:

Կառավարությունների մեծ մասը դժկամություն էին ցուցաբերում այդ աշխատանքներում ներգրավվելու հարցում: Միակ պատվավոր բացառությունը Նորվեգիայի կառավարությունն էր, որը 3 մլն. նորվեգական կրոն նվիրաբերեց և սրանով թերևս ապահովեց ամենախոշոր ավանդը per capita մեկ երկրից: Նորվեգական Կարմիր Խաչը ակտիվ դեր ունեցավ օգնության նախաձեռնությունների գործում՝ ապահովվելով անձնակազմով սննդով ու դրամական մեծ նվիրատվություններով:

Փախստականները Ռուսաստանից

Նանսենի երրորդ կարևոր հանձնարարությունը Ռուսաստանի կոմունիստական ռեժիմից փախած բոլոր մարդկանց օգնության կազմակերպումն էր: Մի քանի միլիոն մարդ լքեց երկիրը 1917 թ. հեղափոխության զարթոնքի, քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի ժամանակ: Արդեն 1921 թ. հունիսին իրադրությունն այնքան սրված էր, որ Կար-

միր Խաչի միջազգային կոմիտեն և այլ մարդասիրական օգնության կազմակերպություններ դիմեցին Ազգերի Լիգային և խնդրեցին, որ Նանսենը նշանակվի Գերագույն հանձնակատար Ռուսաստանի փախստականների հարցով: Նանսենը հանձն առավ այս առաջադրանքը նույնպես: Նա պետք է փախստականներին տեղավորեր այն երկրներում, որտեղ նրանք հնարավորություն կունենային աշխատանք գտնել: Պարզվեց, որ դա բավականին դժվար խնդիր էր: Նա ընդհարվեց շատ կառավարությունների հետ, որոնք պայքարում էին անկման շրջանում առաջացած գործազրկության և ֆինանսական ծանր վիճակի դեմ:

Հիմնական խնդիրներից մեկը անձի ինքնությունը հաստատող փաստաթղթեր չունեցող փախստականների մեծ թիվն էր. ռուսներ, որոնք կորցրել էին իրենց անձնագրերը պատերազմի բովում, կամ մարդիկ, որոնք արտաքսվել էին այլևս գոյություն չունեցող երկրներից, օրինակ՝ Հունգարիայի որոշ շրջաններից, Ավստրիայից, որոնք Առաջին համաշխարհային պատերազմից հետո մտան Հարավսլավիայի կազմի մեջ:

Այս մարդկանց օգնելու համար 1922 թ. որոշվեց յուրաքանչյուր փախստականի համար ձևակերպել անձը հաստատող վկայական: Այս, այսպես կոչված «Նանսենի անձնագիրը» դարձավ արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ փաստաթուղթ և ճանաչվեց 52 երկրների կառավարությունների կողմից: Ձևակերպման կամ փոխելու դեպքում անհրաժեշտ էր վճարել 5 ոսկե ֆրանկ, որը նպաստեց օգնության նախաձեռնությունների ֆինանսավորմանը ժնևում մինչև 1939 թ. գործող Նանսենի գրասենյակի միջոցով:

Կցանկանայի նաև նշել, որ Օսլոյի մոտ, Պոլիոգդայում գտնվող Ֆրիտյոֆ Նանսենի տան ցուցահանդեսում, հետաքրքրասերները կարող են տեսնել «Նանսենի անձնագիրը» կտավի պատճենը, որի հեղինակը ռուս փախստական, հռչակավոր նկարիչ Մարկ Շագալն է:

Փախստականները Փոքր Ասիայից

1919 թ. գարնանից սկսած մոլեգնում էր հույն-թուրքական պատերազմը: 1922 թ. սեպտեմբերին գեներալ Մուստաֆա Քեմալը Փոքր Ասիայում հարձակվեց հույների վրա: Հազարավոր հույներ լքեցին իրենց տները և ապաստարան փնտրեցին Հունաստանում: Ընդհանուր թվով մոտավորապես 1 միլիոն հույներ և 100 000 հայեր տուժեցին: Թրասում լուծումը գտնելու անհաջող փորձից հետո Ֆրիտյոֆ Նանսենը ներկայացրեց խիզախ պլան, որի համաձայն Թուրքիայի հույները պետք է փոխանակվեին Հունաստանի թուրքերի հետ: Եվ հույները, և թուրքերը վճռականորեն դիմադրում էին այս պլանին, բայց, լինելով հմուտ դիվանագետ, Նանսենին հաջողվեց համոզել երկու կողմերին էլ ընդունել այս ծրագիրը 1923 թ. Լոզաննում կայացած խաղաղության կոնֆերանսում:

Համաձայնություն կնքվեց, ըստ որի երկու կողմերի ռազմագերիներն էլ անմիջապես պետք է հայրենադարձվեին: Մեկ միլիոնից ավելի հույներ Հունաստան տեղափոխվեցին Փոքր Ասիայից և Արևելյան Թրասից, իսկ մոտ կես միլիոն թուրքեր հունական տերիտորիաներից Թուրքիա:

Այստեղ նույնպես Ֆրիտյոֆ Նանսենը ցուցաբերեց յուրահատուկ հեռատեսություն կազմելով մի ծրագիր, որը 1990 թթ. դարձավ ամենաբեղմնավոր եղանակներից մեկը հետագա կոնֆլիկտների լուծման հարցում: Նա հետևեց, որ Հունաստանի կառավարությունը ստանա խոշոր միջազգային փոխառություն փախստականների համար տներ կառուցելու, գյուղատնտեսական անասուններ, գութաններ և հացահատիկի սերմ գնելու համար: Հույները ստացան նաև միջոցներ արտադրության ու ձկնորսության զարգացման համար՝ երկրի տնտեսական վիճակի բարելավման նպատակով: Մեկ անգամ ևս Ֆրիտյոֆ Նանսենը ժամանակից առաջ անցավ իր ստրատեգիայով. «Օգնությունից դեպի զարգացած օգնություն»:

Փախստականները Հայաստանից

Հայ ժողովրդի ողբերգությունը չափվում է դարերով: Այս էթնիկական փոքրամասնությունը բնակվում էր Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի սահմանամերձ մի մեծ տարածքում: Դարերի ընթացքում այդ տարածքը գրավվել է տարբեր ազգերի կողմից: Հայաստանը անկախ թագավորություն լինելով, հաճախ ընկել է տարբեր երկրների լծի տակ, և հազարավոր հայեր կոտորածի, գաղթի ու արտաքսման են ենթարկվել: 1920 թ. Սևրի խաղաղության կոնֆերանսում, հայ ժողովրդին Ազգերի Լիգայի կողմից երաշխավորվեց անկախություն: Սակայն այդ որոշումը գլխիվայր շրջվեց 1921 թ. ռուս-թուրքական խաղաղության պայմանագրով: Ավելի ուշ, 1923 թ. Լոզաննի Խաղաղության պայմանագրում հայերի մասին նույնիսկ չհիշատակվեց:

1924 թ. Ազգերի Լիգայի Ասամբլեան խնդրեց Նանսենին երկարացնել փախստականների հարցով իր աշխատանքի ժամկետը հայ ժողովրդին

օգնելու նպատակով: Նանսենը տվեց այդ խնդրի լուծման մանրամասն պլանը: Սակայն լուծումը տրվել էր հայերի մի փոքր խմբի համար միայն: Նրա հիմնական պլանը երբեք չիրագործվեց շատ երկրներում ցրված մեծ թվով հայերի համար: Այս միտքը մինչև մահ հանգիստ չտվեց Նանսենին:

Կան մի քանի պատճառներ, թե ինչու Նանսենը ձախողվեց մի հարցում, որ այնքան հոգեհարազատ էր նրան: Անհնարին էր պլանի իրագործման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթումը: Նրան նաև շատ քննադատեցին Սովետական Հայաստան փախստականների հայրենադարձման վերաբերյալ պլանի համար:

Նանսենը հենվում էր հայրենադարձված փախստականների անվտանգության վերաբերյալ Ստալինի երաշխավորանքների վրա, թեև դրանք երբեք չիրագործվեցին: Շատ հայրենադարձված հայեր Ստալինի վայրագ քաղաքական զտման զոհը դարձան: Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի նախագահ Գուստավ Ադորը մեկն էր նրանցից, որ զգուշացրին Նանսենին: Այս միջադեպը մտել է պատմության մեջ՝ որպես Նանսենի հազվադեպ սխալներից մեկը:

Անկեղծորեն պետք է նշել, որ Հայաստանի կառավարությունն ինքն իրագործեց Նանսենի պլանը: Հազարավոր հայեր հաստատվեցին ռոդգելի շրջաններում: Բացի այդ, մոտ 40 000 հայեր հետագայում հաստատվեցին Սիրիայում՝ Նանսենի պլանի հիմնական ուղղություններին համապատասխան:

Ֆրիտյոֆ Նանսենը Ազգերի Միությունում

1920-1929 թթ. Նանսենը Ազգերի Լիգայում նորվեգական պատվիրակության անդամն էր, ուր հիմնականում նա գրավել է նախագահի պաշտոնը: Նա գուցե մեկն էր նրանցից, որն ավելին, քան մեկ ուրիշը, բարձրաձայն խոսեց և փորձեց հարգանք ներշնչել մարդու հիմնական իրավունքների և մարդկային արժանապատվության հանդեպ: Հասկացություններն այն ժամանակ այնքան պարզ չէին սահմանված, ինչքան այժմ, բայց դրանց բովանդակությունը պարզ էր Նանսենին:

Ինչպես վերը նկարագրվեց, նա միշտ պատրաստ էր պաշտպանել թույլին, կարիքավորին և տառապյալին, էթնիկական այն փոքրամասնություններին, որոնք չարաշահման օբյեկտ էին հանդիսանում:

Նանսենը վշտացած էր քաղաքագետների ու դիվանագետների դանդաղկոտությունից, կոպտությունից: Նա զգում էր, որ կառավարություններ

ը պետք է պատասխանատվություն կրեին զոհերի վատ վիճակի ու թշվառության համար: Սրանք պետության գործն էին և չէին կարող վստահվել մասնավոր բարեգործությանը: Կառավարություններն էին պատասխանատու պատերազմի ու հասարակության սխալ կառավարման համար, հետևաբար նրանք նաև պետք է պատասխանատվություն կրեին հետևանքների համար:

Ինչպես վերը նշվեց, այս հարաբերությունը պատմական նշանակություն ունի: Նա խնդիրը առօրյա, համընդհանուր մակարդակից բարձրացրեց պաշտոնական մակարդակի, դարձրեց այն պետության գործը: Մենք սրա կարևորությունը կարող ենք ավելի պարզ տեսնել ներկայումս: Այս մտածելակերպը այժմ քաղաքականապես ընդունված է: Այսօր շատ երկրներ ունեն իրենց նախարարությունները ու վարչությունները, որոնք զբաղվում են զարգացող երկրներին անհրաժեշտ օգնություն ու աջակցություն ցուցաբերելու հարցերով: Այսօր այն դարձել է հայտնի միջոց աղքատ և հարուստ երկրների միջև տարբերությունները հավասարեցնելու համար՝ լավ և արդարադատ աշխարհի ստեղծման պայքարում:

Նանսենը ապացուցեց նաև, թե ինչքան է ինքը ժամանակից առաջ՝ ուշադրությունը սևեռելով Ռուսաստանում տիրող սովին և հայ ազգի վիճակի վերահաստատմանը: Նանսենի կենսագիրներից մեկը, նրա հավատարիմ ընկեր և օգնական Ֆիլիպ Նոյել Բեյքերն ասել է, թե այն ամենի մեծ մասը, որ այսօր տեղի է ունենում Միավորված Ազգերում, բխում է Նանսենի գաղափարներից:

Խաղաղության նախաձեռնությունները

Ֆրիտյոֆ Նանսենի պայքարը հանուն մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության, ընդգրկում է նաև նրա անդադար ջանքերը պատերազմը փոխարինելու ընդհարումների խաղաղ լուծմամբ: Նա հավատում էր, որ ագրեսիան հանցանք է, ժողովուրդների միջև տարաձայնությունների լուծման անարժան ու անմարդկային ձև: Պատերազմը անդադար տառապանք է պատճառում անմեղ ժողովրդին: Ազգերի Լիգայում կատարած իր աշխատանքների շնորհիվ նա օժանդակեց խաղաղության և մարդկանց համերաշխության գաղափարներին, գաղափարներ, որոնք որպես միջազգային կանոն ընդունելություն գտան Միավորված Ազգերի 1945 թ. Սան-Ֆրանցիսկոյում ստորագրված պայմանագրում: Նանսենը օժանդակեց մարդու իրավունքները խաղաղության գա-

ղափարի մեջ սահմանելուն: Եթե ուշադիր կարդանք Կարմիր Խաչի խաղաղության սահմանումը, որը միակողմանի ընդունվեց 1997 թ. Բելգրադում. Միջազգային Կարմիր Խաչի կոնֆերանսում, կարող ենք համոզվել, որ այն ճիշտ նման է Ֆրիտյոֆ Նանսենի խաղաղության հիմնական սահմանմանը. «Կարմիր Խաչը տեսնում է խաղաղությունը ոչ միայն որպես պատերազմի բացակայություն, այլև որպես բոլոր ժողովուրդների ու պետությունների միջև համագործակցության պրոցես, համագործակցություն, որ հիմնված է ազատության, անկախության, հավասարության վրա, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, ռեսուրսների ու կարիքների արդար բաժանման վրա»:

Նանսենը հավատում էր, որ միջազգային համագործակցության շնորհիվ կարելի է տարածայնությունները լուծել բանակցությունների կամ միջնորդ դատարանի միջոցով: Քիչ մարդիկ են հասկացել «bons offices» կամ «լավ գրասենյակներ» հասկացությունն այնպես, ինչպես Նանսենը: Նրա կողմից այսպես կոչված «ոչ պաշտոնական» քննարկումների անկեղծ օգտագործումը հաճախ նրան հաղթանակ էր պարգևում այն գործերում, ուր ուրիշները պարտություն էին կրում: Նա հստակ պատկերացնում էր պաշտոնական, կառավարական, պատասխանատու պլանի և դեպքերի ոչ պաշտոնական, խուսափողական ընթացքի միջև փոխազդեցության գաղտնիքը՝ անկախ կազմակերպչական մակարդակից: Եթե մենք համեմատենք Ֆրիտյոֆ Նանսենի ու «Նորվեգական ալիքի», Թերյե Ռեդ Լարսենի ու նրա գործընկերների հաջող բանակցությունների տեխնիկան, մենք կարող ենք տեսնել, որ Նանսենը այստեղ էլ իր ժամանակից առաջ էր անցել: Պարզապես հիշենք 1921 թ. համաձայնագիրը Սովետական Արտաքին գործերի կոմիսար Գեորգի Չիչերինի հետ, երբ Նանսենը կառավարության ներկայացուցչի հետ՝ ազգային մակարդակով պարտավորեցնող համաձայնագիր ստորագրեց՝ միջազգային անկախ կազմակերպության անունից:

Ֆրիտյոֆ Նանսենը համառորեն պայքարում էր պատերազմում թշնամացած ժողովուրդների միջև լավ հարաբերությունների վերականգնման համար: Նա վստահ էր, որ աշխարհում կոմունիստական և ոչ կոմունիստական երկրների միջև անհրաժեշտ է պահպանել խաղաղ գոյակցություն: Ռուսաստան կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում ռուս ժողովուրդի մասին ստացած իր տպավորությունների վրա հիմնվելով, նա փորձեց ապահովել ռուսների մուտքը Ազգերի Լիգա: Այս

աշխատանքների համար ամուր հիմք հանդիսացավ այն օգնությունը, որ նա ցուցաբերեց 1921-1922 թթ. Ռուսաստանում առաջացած սովից տուժածներին:

Ազգերի Լիգայում աշխատելու ընթացքում Նանսենը խիստ հետաքրքրվում էր այնպիսի դրույթներով, ինչպիսիք էին պայքարը ստրկության դեմ, զինաթափումը, էթնիկ փոքրամասնությունների իրավունքների համար պայքարը և Ազգերի Լիգայի կառավարումը:

Ֆրիտյոֆ Նանսենի ջանքերը նաև Նորվեգիայի կամավորական, անկախ աշխատանքների օրինակ են միջազգային մարդասիրական օգնության ոլորտում, հատկապես Նորվեգական Կարմիր Խաչի և «Փրկեցեք երեխաներին» կազմակերպություններում:

Որտեղի՞ց են առաջացել ազդակները

Գուցե համարձակ, բայց նաև խիստ հետաքրքիր է Ֆրիտյոֆ Նանսենի կերպարանափոխությանը հետևելը՝ սկսած երիտասարդության շրջանի կոպիտ սոցիալ դարվինիստից մինչև մեղմ, մարդասեր բարեգործն ու մարդու իրավունքների պաշտպանը՝ կյանքի վերջին տարիներին: Սկսելով հասարակության մեջ «բնական ընտրության» փաստի հաստատումից, Նանսենը դարձավ այն անձնավորությունը, որ թերևս ամենաշատն էր աջակցել թույլերին ու տկարներին, քան իր ժամանակակիցներից որևէ մեկը:

Ինչպե՞ս դա պատահեց: Առանց փորձելու հաստատել, թե որն է ժառանգականության և որը շրջակա միջավայրի ազդեցությունը, կարող ենք մեր խորհրդածություններում հիմնվել Նանսենի կատարած հայտարարությունների ու գրավոր աշխատանքների, ինչպես նաև նրա կենսագրության վրա: Աստվածաբանության պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Նիլս Բլոկ-Հոյելը տվել է Նանսենի զարգացման մեկնաբանությունը՝ սկսած մանկության շրջանի քրիստոնեական հավատից, երիտասարդության շրջանի սոցիալական դարվինիզմից մինչև կրոնի նկատմամբ չեզոք վերաբերմունքը՝ քրիստոնեական բարեխոսության դրական իմաստով: Նանսենը ինքը, Վիլհելմ Ֆրիման Կորեն Հոլդտին 1922 թ. գրած իր նամակում նշել է, որ իր կյանքի լավագույն տպավորությունները ստացել է ձևավորման տարիներին: 1880 թ. սկզբին, երբ նա երիտասարդ գիտնական էր ու ապրում էր Բերգենում, Պաստոր Հոլդտի և նրա կնոջ հետ, հաճախ էր հետևում պաստորին հիվանդներին ու

աղքատներին կատարած այցելությունների ժամանակ: Այս ժամանակ էր, որ նա հասկացավ, թե քրիստոնեությունը հոգևորականի առջև սիրո և զոհողության ինչպիսի պահանջներ է դնում, դա նրա սիրտը հարգանքի խորը զգացումով լցրեց:

Դ-ր Արմադեր Հանսենը, որ հայտնագործել էր բորոտության վիրուսը, Նանսենի գործընկերն էր Բերգենի թանգարանում: Նա Նանսենին տեղեկացրեց էվոլյուցիայի տեսության մասին և նրա ուշադրությունը սևեռեց սոցիալ-դարվինիզմի վրա, մի հետաքրքրություն, որը հետագայում ավելի ուժեղացավ 1886 թ. պրոֆեսոր էրնստ Հեքելին հանդիպելու շնորհիվ:

Իր «էսկիմոսների կյանքը» գրքում Նանսենը նկարագրել է, թե ինչպես ինքն առաջին անգամ հանդիպեց թույլ և վտանգի սպառնալիքի ներքո գտնվող մի ժողովրդի, որն անարդարացիորեն տառապում էր: Դա ուժեղ ազդեցություն ունեցավ Նանսենի վրա: Անօգնական ժողովրդի ապագա պաշտպանը դարձավ զիջող և կազմակերպված: Նրա զգայունությունը վերաճեց կարեկցանքի և ցավակցության՝ ագահ վաճառականների կողմից մարդու հիմնական իրավունքների խախտման հետևանքով տառապող այնպիսի ժողովուրդների նկատմամբ, ինչպիսիք էին օրինակ, Գրենլանդիայի էսկիմոսները:

Նանսենը նշել է Հենրիկ Իբսենի՝ իր վրա ունեցած մեծ ազդեցության մասին: 1898 թ. Իբսենի 70-ամյակին նվիրված իր ողջույնի խոսքում նա ասել է. «Այն մարդուն, որը ազդել է իմ վրա երիտասարդությանս տարիներին, կանխորոշել է իմ զարգացումը, նշել է իմ կոչումն ու կամքիս ազնվությունը»: Մասնավորապես նա նկատի ուներ Բրանդի կերպարը՝ Իբսենի համանուն պիեսում:

Նանսենը կիսում էր Բյորնստյերն Բյորնսոնի խմբակի անդամների հակակրանքը պատերազմի և ուժի քաղաքականության հանդեպ: Դարեվերջին Ֆրիտյոֆ Նանսենը չէր հանդիմանում դոգմատիկ դարվինիզմը և նրա սոցիալ-քաղաքական հետևանքները: Նանսենը այժմ պնդում էր, որ հասարակության մեջ մեծ ռեսուրսներ ունեցող մարդիկ իրավունք չունեն օգտագործել թույլերին: Մարդը ունի մարդասիրական պարտականություն՝ օգնել դժվարության մեջ գտնվողին: Նա մտահոգությամբ շեշտում էր, որ հունական կրոնի, քրիստոնեության և բուդդիզմի հիմքը կազմող ընդհանուր էթիկական միջուկը եղբայրական սերն է:

Կնոջ՝ Եվայի մահը 1907 թ. անջնջելի հետք թողեց Նանսենի կյանքում: 6 տարի անց կյանքից հեռացավ նրա որդին՝ Ասմունդը: 1913 թ. իր վիշտը

մեղմացնելու և միջավայրը փոխելու նպատակով նա ընդունեց Սիբիր մեկնելու հրավերը: Ռուսաստանում Նանսենը ջերմ հյուրընկալության արժանացավ, և դա ցնցող տպավորություն գործեց նրա վրա: Հավանաբար, այստեղից էլ սկիզբ առավ նրա ուժեղ համակրանքը Ռուսաստանի և ռուս ժողովրդի հանդեպ, որն ակնհայտ էր նրա կողմից կատարվող օգնության աշխատանքներում Առաջին համաշխարհային պատերազմից հետո:

1917-1918 թթ. ԱՄՆ-ում Նորվեգիայի համար սննդի պաշարների ձեռքբերման աշխատանքների ժամանակ նա հանդիպեց Հերբերտ Հուվերին, որը հետագայում դարձավ ԱՄՆ-ի պրեզիդենտ: Այդ ժամանակ Հուվերը պատասխանատու էր Եվրոպայում Ամերիկայի կողմից կատարվող օգնության աշխատանքների համար: Նանսենը Հուվերին նորից հանդիպեց 1919 թ. Վերսալում կայացած Խաղաղության կոնֆերանսին, որտեղ նա Նանսենին երաշխավորեց Ռուսաստանի սովյալներին աջակցման աշխատանքների ղեկավարի պաշտոնի համար: Նանսենին օգնական նշանակվեց Բրիտանացի դիվանագետ ու քվակեր Ֆիլիպ Նոյել Բեյքերը, որը ևս նպաստեց հետագայում նրա մարդասիրական գործունեության ընդլայնմանը:

Գրականության մեջ բերվող փաստերի համաձայն Նանսենի վրա դրական ազդեցություն են թողել նաև ժնևի Կարմիր Խաչի ղեկավարները, որոնց, առանց ծածուկ շարժառիթների, հոգատարությունը զոհերի նկատմամբ ակնհայտ էր: Կարմիր Խաչի շարժմանը բնորոշ անկեղծ կարեկցանքը խոր հետք թողեց նրա գործունեության վրա:

Ծանոթագրություն

Մեծ մարդու կյանքի և աշխատանքների մասին ակնարկից հետո կարելի է ներկայացնել որոշ անձնական ծանոթագրություններ Նանսենի մարդասիրական ջանքերի կարևոր կողմերի մասին: Որոշ կենսագրականներում Նանսենը ներկայացված է որպես քաղաքականապես միամիտ գործիչ՝ հիմք ընդունելով նրա հարաբերությունները քաղաքագետների ու դիվանագետների հետ և նրա սրտացավ վերաբերմունքը: Այդ միգուցե նա միամիտ էր հաշվենկատ քաղաքագետի տեսակետից, բայց մի՞թե մարդկությունը շատ բան չի պարտական «միամիտ» անհատներին: Օրինակ, կոմս Ֆոլկե Բերնադոտտը նույնպես միամիտ համարվեց, երբ ցանկություն հայտնեց բանակցություններ վարելու Գեստապոյի ղե-

կավար Հիմլերի հետ 1945 թ. Գերմանիայի համակենտրոնացման ճամբարներից բանտարկյալների ազատագրումն ապահովելու համար: Իր միամտությամբ. Կարմիր Խաչի էքսպեդիցիայի հետ նա 27.000 մարդկային կյանք փրկեց, որոնցից 3.000-ը նորվեգացի էին: Ես ինքս էլ դժվար թե լինեի կենդանի մնացածների շարքում, եթե չլիներ այս դյուրահավատ այլամիտը:

Երբ Նանսենը 1923 թ. հրատարակեց իր «Ռուսաստանը և խաղաղությունը» գիրքը, նրան ներկայացրին որպես քաղաքականապես միամիտ գործիչ: Պնդում էին, որ հեղինակը մեծ սիրով է նկարագրել տոտալիտար ռեժիմը և չափից ավելի դյուրահավատ է Սովետական Միությունում տիրող իրավիճակի նկատմամբ: Ֆրիտյոֆ Նանսենը չէր հավատում կոմունիզմին՝ որպես սոցիալական սիստեմի, բայց նա հավատում էր մարդկանց և այն ուղերձին, որ խոստանում էր ավելի լավ պայմաններ հասարակության ամենաթշվառ անդամների համար: Նոր տնտեսական քաղաքականության շրջանում Սովետական Միության վարած կուրսի փոփոխությունը բարեփոխությունների հույս էր ներշնչում, թեև Նանսենի գրքում տեղ գտավ նաև սիստեմի խիստ քննադատությունը:

Գիրքը լույս տեսավ Արևմտյան Եվրոպայում, նույն տարին այն հրատարակվեց նաև Ռուսաստանում Մոսկվայում ու Պետրոգրադում, բայց առանց որոշ նախնական քննադատական դիտողությունների: Նանսենին դա շատ վշտացրեց և նա պահանջեց, որ ռուսերեն հրատարակության մեջ ուղղումներ մտցվեն: Նրա խնդրանքն ընդառաջվեց և հրատարակվեց նոր օրինակ, ուր ներողություն էր խնդրվում «անփութության» պատճառով նախադասություններ բաց թողնելու համար:

Նանսենի կողմից 1920 թ. սկզբին Սովետական Միության զարգացման պաշտպանության դրդապատճառ կարող էր հավանաբար լինել Ռուսաստանի ու նրա ժողովրդի հանդեպ ունեցած սերը: Հարաբերությունը հավանաբար կախված է նաև հետևյալ ճանաչված երևույթից, իմացականի և զգացականի միջև հավասարակշռությունից: Շատ խելացի լինելը հաճախ հանգեցնում է կասկածների ու գործելու անկարողության: Շատ մեծ սիրտը հաճախ մղում է իմպուլսիվ գործողությունների: Ինչ վերաբերվում է Նանսենին, կարելի է ասել, որ նա ներկայացնում էր ողջախոհության և ջերմ զգացմունքների միջև հավասարակշռության օրինակ:

«Խաղաղության» մրցանակին արժանացած Կարլ վոն Օսիետսկին 1930 թ. Նանսենի մահից հետո ասել է, «Բարեգործ Ֆրիտյոֆ Նանսենը ոչ

թույլ էր, ոչ սենտիմենտալ, ոչ էլ ֆանատիկ: Նա ոչ միայն մեծ սիրտ, այլև պայծառ միտք ուներ: Դա էր նրա հաջողության գաղտնիքը»: Ավելին, նա թե ֆիզիկական, թե բարոյական խիզախությամբ օժտված մարդ էր, և իրական կյանքում դրա հետևանքներն ակնհայտ էին:

Նանսենի բարդ բնավորության մյուս կողմը նրա վերաբերմունքն էր մասնավոր, կամավորական, անկախ, մարդասիրական կազմակերպությունների հանդեպ: Իրականում, նրա ժամանակը սուղ էր այս տիպի հաստատությունների համար: Նա հավանաբար մտածում էր, որ իշխանությունների պարտականությունն է հոգ տանել կարիքավորներին, վերջիններս չպետք է կախման մեջ լինեն մասնավոր բարեգործությունից:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Նանսենի հանդիպումները մասնավոր բարեգործական կազմակերպությունների հետ Ռուսաստանում հավանաբար փոխեցին նրա կարծիքը: Այստեղ նա ականատես եղավ կամավորական կազմակերպությունների աշխատակիցների իրական անձնազոհությանը: Օրինակ, երբ նա ժամանեց Ռուսաստան օգնության աշխատանքների կազմակերպումը սկսելու համար, Կարմիր Խաչը և մի քանի այլ կազմակերպություններ արդեն մի քանի տարի էր, ինչ գործունեություն ու նախապատրաստական աշխատանքներ էին ծավալել այնտեղ: Նանսենը ծայրահեղ զգացված էր ու գովասանքի բարձր խոսքեր ասաց: Ինչ վերաբերվում է անկախ կամավորական կազմակերպությունների ու ղեկավարության հարաբերությանը, Նանսենը հավանաբար զգաց, որ Կարմիր Խաչի հիմնադիր Հենրի Դյունանտը հոգեհարազատ էր իրեն:

1863 թ. Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեն, իր հիմնադրումից մեկ տարի անց, ներկայացրեց Առաջին ժնևյան պայմանագիրը Պատերազմի զոհերի պաշտպանության հարցերով:

Հետագայում Դյունանտին կառավարության ղեկավարների կողմից հետևյալ հարցը տրվեց. «Դուք ի՞նչ իրավունք ունեիք միջամտել պետության գործերին», որին նա փայլուն պատասխան տվեց, «մարդասիրական նախաձեռնության իրավունք»: Այս պատասխանը լռեցրեց կառավարության ներկայացուցիչներին:

Սա հավանաբար վերջին ժամանակների պատմության մեջ առաջին անգամ էր, որ զոհերի շահերի պաշտպանը հանդգնեց ղեկավարությանը պահանջ ներկայացնել: Նանսենը համաձայն էր Դյունանտի մտածելակերպի հետ և Ազգերի Լիգայի ամբիոնից պահանջեց, որ կառավարությունը

պետք է պատասխանատվություն կրի պատերազմական գործողությունների համար և հոգատարություն ցուցաբերի զոհերի նկատմամբ:

Նանսենի աշխատանքի արդյունքները

Մարդասիրական ոլորտում Նանսենի կյանքն ու աշխատանքը ուսումնասիրելուց, այդ մասին տեղեկացնելուց և այն մեկնաբանելուց հետո մնաց պարզաբանել մեկ հարց. «Ո՞րն է նրա ժառանգությունը»:

Նրա ոգեշնչման աղբյուրը

Առաջին ու ամենակարևորն այն է, որ Նանսենը հանդիսացավ ոգեշնչման աղբյուր բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են իրենց հայրենակիցների բարեկեցությամբ և հաջողությամբ: Այսօր շատ կենդանի մնացած մարդիկ գովաբանում են նրա կատարած աշխատանքը և երախտապարտ են նրան՝ իրենց կյանքը փրկելու համար: 1994 թ. ռուս արվեստագետ Վ. Կ. Կոզինը Բիգդոյի Ֆրամ թանգարանին նվիրեց ծովացուլի մի քանդակ՝ ի նշան երախտագիտության Նանսենի կողմից ռուս ժողովրդի համար կատարած աշխատանքի:

Ռուսաստանում այսօր էլ դեռ կան կենդանի մարդիկ, որոնց կյանքը երեխա հասակում փրկվել է Նանսենի շնորհիվ: Հայաստանում, Երևանի թանգարաններից մեկում հատուկ սենյակ կա նվիրված Նանսենի հիշատակին՝ հայ ժողովրդի համար կատարած աշխատանքների համար: Վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ Նանսենը ոգեշնչման աղբյուր հանդիսացավ Գերմանիայում գտնվող շատ նորվեգացի բանտարկյալների համար: Եթե Նանսենին հաջողվեց գոյատևել Ֆրանց Յոզեֆի լքված քարե խրճիթում, կարող էին և իրենք:

Օսվալդ Հարյոն, որն աքսորվել էր Սովետական Միության Գուլագը պատերազմից հետո, պատմում է, թե ինչպես է ինքը՝ նորվեգացի լինելով, փրկվել գերությունից մի բժշկի օգնությամբ, որը Նանսենի մեծ երկրպագուն էր: 1922 թ. Նանսենին շնորհվեց խաղաղության Նոբելյան մրցանակ՝ ռազմագերիների, սովյալների ու փախստականների հետ կատարած աշխատանքի համար: Նա երկրորդ նորվեգացին էր, որ արժանացավ այս պատվին, Քրիստիան Լու Լանժից հետո, որին 1921 թ. Հյալմար Բրանտինգի հետ միասին մրցանակ էր շնորհվել: Դա, իհարկե, հիմնավորեց Նորվեգիայի տեղը քարտեզի վրա որպես խաղաղասեր երկիր: Նանսենի նկատմամբ հարգանքը ավելի խորացավ, երբ Նոբելյան մրցանակի հետ

ստացված գումարը նա ծախսեց Ռուսաստանում երկու օրինակելի ֆերմա կառուցելու վրա:

Նանսենի անձնագիրը

Ես հիշատակել եմ Նանսենի անձնագրի մասին: Այս ոչ կարևոր թվացող խորհրդանիշը հարյուր հազարավոր մարդկանց տվեց նոր կյանքի և գոյության պահպանման համար հենակետ ստանալու հույս: Այն կմնա որպես մշտական պատվավոր հուշարձան մի մարդու, որն ավելի շատ մտածում էր մարդկանց և ոչ թե բյուրոկրատական ձևերի մասին:

Նանսենի գրասենյակը

Նանսենին չհաջողվեց ականատես լինել փախստականների համար կատարած իր այլասիրական և անսահման աշխատանքների ավարտին: Խնդիրները շարունակվում էին, և Նանսենի գրասենյակը (Նանսենի միջազգային գրասենյակ փախստականների գործերով), որը հիմնադրվեց 1931 թ. Ազգերի Լիգայի կողմից, փախստականների գործերով հանձնակատարի գրասենյակի փակվելուց հետո, ստանձնեց օգնության կազմակերպման աշխատանքները:

Մնացած աշխատանքների հետ միասին այն զբաղվում էր նաև հայ փախստականների համար Սիրիայում և Լիբանանում գյուղեր կառուցելով: 1935 թ. վերջերին Նանսենի գրասենյակը կացարաններով ապահովեց հազարավոր փախստականների Հայաստանում և Թուրքիայում: Ազգերի Լիգայի կողմից մինիմալ ֆինանսական աջակցության միջոցով Նանսենը կարողացավ ֆինանսական, իրավական ու նյութական օգնություն ցուցաբերել մոտ մեկ միլիոն փախստականների: 1938 թ. Նանսենի գրասենյակը՝ նախագահ Մայքլ Հանսսոնի երաշխավորությամբ, արժանացավ խաղաղության Նոբելյան մրցանակի:

Գրասենյակը փակվեց 1938 թ. վերջին և 1939 թ. հունվարի 1-ից նրա պարտականությունները ստանձնեց Ազգերի Լիգայի Փախստականների գործերով զբաղվող նորաստեղծ Գերագույն հանձնակատարի գրասենյակը, որի հիմնական աշխատատեղը Լոնդոնում էր: Ապա կազմակերպությունը տեղափոխվեց Ժնև և այժմ գործում է իր մեծ աշխատակազմով այնտեղ: Դա Միացյալ Ազգերի Փախստականների գործերով Գերագույն հանձնակատարի գրասենյակն է:

Նորվեգիայի փախստականների խորհուրդը, որն այսօր կարևոր գործ

է կատարում, նույնպես ոգեշնչվել է Նանսենի կողմից: 1951 թ. փախստականների հարցի շուրջ կնքված պայմանագրերից շատ հոդվածներ, որոնք հետագայում հրապարակվեցին, լիովին արտացոլում էին փախստականների պաշտպանությանն ուղղված Նանսենի գաղափարները:

Նանսենի հիմնադրամը

Նանսենի հիմնադրամը ստեղծվել է 1896 թ. պրոֆ. Ծ. Ե. Բրոգգերի նախաձեռնությամբ. Ֆրամ էքսպեդիցիայի վերադարձից հետո: Սկզբնական շրջանում այն հիմնվում էր ողջ Նորվեգիայից ստացվող ավանդների վրա: Ստացված շահույթն օգտագործվում է գիտահետազոտական աշխատանքների համար:

Նանսենի շքանշանը

1954 թ. Միացյալ Ազգերի Փախստականների գործերով Գերագույն հանձնակատարը հիմնադրեց պատվանշան՝ փախստականներին օգնություն ցուցաբերելու աշխատանքների համար: Այն կոչվեց Նանսենի շքանշան, որը շնորհվում է տարին մեկ անգամ Միացյալ Ազգերի կողմից նշանակված Նանսենի կոմիտեի երաշխավորությամբ: 1961 թ. այն շնորհվել է Նորին մեծություն Օլավ թագավորին, իսկ 1982 թ-ին Նորվեգիայի ներկայիս թագուհուն՝ Նորին մեծություն Թագուհի Սոնյային:

Նանսենի քոլեջը

Նանսենի քոլեջը՝ Նորվեգական Մարդասիրական Ակադեմիան հիմնադրվել է 1938 թ. Լիլլիամերում՝ Քրիստիան Օյելերուփի և Անդերս Վիլլերի կողմից: Այսօր այն ունի ժողովրդական բարձրագույն դպրոցի կարգավիճակ և հետևյալ նպատակը, «պաշտպանել և հետագայում զարգացնել մարդասիրական ձգտումները, անձնական կյանքի ազատությունն ու մարդկային կարեկցանքը»: Սա մի հաստատություն է, որ ղեկավարվում է ռեկտոր Ինգե էյդսվագի կողմից՝ Նանսենի գաղափարների համաձայն:

Ֆրիտյոֆ Նանսենի ինստիտուտը

Այն գտնվում է Օսլոյի մոտ, Պոլիոգդայում, Նանսենի տանը: Հիմնադրվել է 1948 թ. Նորվեգական Օվկիանոսագրական կազմակերպության կողմից: Պոլիոգդան 1958 թ. դարձավ առանձին հաստատություն, որն ունի երկու նպատակ:

1. պահպանել և ձեռք բերել նոր հիմնադրամներ ի պատիվ Նանսենի հիշատակի
2. մասնակցել գիտահետազոտական աշխատանքների այն ոլորտներում, որոնք կապված են Նանսենի կյանքի և գործունեության հետ:

Այժմ հաստատությունը ղեկավարվում է Ֆրիտյոֆ Նանսենի ինստիտուտի կողմից, որը միջազգային համբավ է ձեռք բերել մի շարք ոլորտներում իր կատարած գիտահետազոտական աշխատանքների շնորհիվ:

Գործունեության այլ բնագավառները

Բացի վերը նշվածից, Նորվեգիայում և արտասահմանում գործում են մի շարք կազմակերպություններ ու հաստատություններ, որոնք կատարում են գիտահետազոտական և մարդասիրական աշխատանքներ Ֆրիտյոֆ Նանսենի ոգով: Այսպիսի կազմակերպություններից մեկը Օսլոյում Մարդու Իրավունքների ինստիտուտն է, որի ղեկավարն է Ասբյոն Էյդեն: Թեև այն չի հիմնադրվել Ֆրիտյոֆ Նենսենի կողմից, բայց գործում է նրա գաղափարների համաձայն:

Վերջաբան

Ես փորձեցի տեղեկատվություն տալ մեր մեծ հայրենակցի կյանքի և գործունեության մասին:

Ես հատուկ ուշադրություն դարձրեցի նրա կատարած աշխատանքներին՝ հանուն մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության: Այսպիսի ժառանգություն, ինչպիսին Նանսենինն էր, լի ազնիվ վերաբերմունքով մարդու արժանիքների նկատմամբ, մեզ քչերն են կտակել: Մասնավորապես, մարդասիրական աշխատանքների ոլորտում Նորվեգիայի ունեցած մեծ հեղինակությունը կարելի է վերագրել Ֆրիտյոֆ Նանսենին: Մենք հիշում ենք նրան ակնածանքով ու երախտագիտությամբ իր հարուստ գործունեության համար: 1930 թ. Նանսենի մահվան կապակցությամբ գերմանական Simplicissimus ամսագրում նրա մասին հիշատակված էր հետևյալը. «Նորվեգիան մեծացրեց ու խնամեց նրան, իսկ աշխարհը՝ կորցրեց»:

Ես կարծում եմ, որ սա Ֆրիտյոֆ Նանսենի արժանիքների լավագույն գնահատականն է:

Ֆրիտյոֆ Նանսենի ընտանիքը

Ֆ. Նանսենը և Ա. Մռավյանը

Նանսենյան հանձնաժողովը Երևանում՝ հողժողկոմ Ա. Երզնկյանի աշխատասենյակում, 1925 թ.

Ֆ. Նանսենը Լենինականի որբանոցում

Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր Ֆ. Նանսենը համալսարանի գյուղատնտեսական այգում, 1925 թ.



Պատմական գիտությունների դոկտոր, «Ֆրիտյոֆ Նանսենը և Հայաստանը» մենագրության հեղինակ Մակիչ Արզումանյանը Օսլոյում Ֆ. Նանսենի հուշարձանի մոտ, 1975 թ.